ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, Հեռ. (0237)34441 , metsamormeria@yandex.ru

N 01256
17 մայիս 2022թ.

«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՓԱՌԱՆՁԵՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սուքիասյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի և «Շին նախագիծ » ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) հետ «Գնումների մասին» 2022 թվական ապրիլի 21-ին կնքվել է բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների գնման «ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/6/1» ծածկագրով պայմանագիրը՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով :

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 124 որոշումը՝ գնման պահանջի վերացման հիմքով՝ համայնքապետարանը միակողմանի լուծում է սույն պայմանագիրը 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով :

Կատարողի կողմից բանկային երաշխիքի տեսքով որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կվերադարձվեն կատարողին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն որոշումը նախարարության կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետի՝ Է. Մարկոսյան